ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 30.07.2020թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2020/144

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝ «ՔՈՄՓ. ԷՅԷՄ» ՍՊԸ-ի տնօրեն

Գ. Ջուլիակյանի (պետական գրանցման վկայականի համար՝ 271.110.1122898),

ՀՀ դատական դեպարտամենտի լիազորված ներկայացուցիչներ

Հ. Սարգսյանի (լիազորագիր տրված՝ 07.07.2020թ.),

Լ. Սահակյանի (լիազորագիր տրված՝ 07.07.2020թ.),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 30.06.2020թ. թիվ 26/26/9761-2020 գրությամբ «ՔՈՄՓ. ԷՅԷՄ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չուեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ դատական դեպարտամենտի 25.06.2020թ. թիվ ԴԴ-3-Ե-4258 գրության հիման վրա, 30.06.2020թ. թիվ 26/26/9761-2020 գրությամբ նախաձեռնել է «ՔՈՄՓ. ԷՅԷՄ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների

գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «ՔՈՄՓ. ԷՅԷՄ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«ՔՈՄՓ. ԷՅԷՄ» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ ֆինանսների նախարարությունը 30.06.2020թ. թիվ 26/26/9761-2020 գրությամբ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում նախաձեռնել է «ՔՈՄՓ.ԷՅԷՄ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ: Ընթացակարգը նախաձեռնվել է ՀՀ դատական դեպարտամենտի կողմից հրավիրված «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-20/34» ծածկագրով գնանշման հարցման հայտերի գնահատող հանձնաժողովի կայացրած որոշման հիման վրա:

«ՔՈՄՓ.ԷՅԷՄ» ՍՊԸ-ն «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-20/34» ծածկագրով գնանշման հարցմանը ARMEPS գնումների էլեկտրոնային համակարգի միջոցով ներկայացրել է հայտ՝ մասնակցության դիմում-հայտարարություն (հավելված 1), առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր (հավելված 1.1), գնային առաջարկ (հավելված 2):

18 հունիսի 2020թ թիվ ԴԴ-3-Ե-4147 ՀՀ դատական դեպարտամենտի ղեկավարի ֆինանսատնտեսական հարցերով տեղակալ պարոն Ա. Ստեփանյանի կողմից ստորագրված գրությամբ էլեկտրոնային փոստի միջոցով մեզ է ուղարկվել հայտով մեր կողմից առաջարկված ապրանքի տեխնիկական բնութագրերը օրենքով սահմանված ժամկետում շտկման առաջարկ: Գնահատող հանձնաժողովը որպես հրավերով սահմանված պահանջների նկատմամբ անհամապատասխանություն նշել է, որ առաջրկվել է “պրոցեսորը i5-1035G1, 1.0GHz, արագացնելու հնարավորությամբ մինչև 3,6GHz”, այնինչ հրավերով պահանջվել է “պրոցեսորը առնվազն 2,1GHz, արագացնելու հնարավորությամբ՝ մինչև 3,9GHz»:

2020թ. հունիսի 19-ին մենք ՀՀ դատական դեպարտամենտի ղեկավարի ֆինանսատնտեսական հարցերով տեղակալ պարոն Ա. Ստեփանյանի գրությանը ի պատասխան ուղարկել ենք տեղեկանք մեր կողմից ներկայացված դյուրակիր համակարգիչների պրոցեսորների հզորության վերաբերյալ: Մեր տեղեկանքում մասնավորապես նշվել է, որ «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-20/34» ծածկագրով գնանշման հարցմանը մեր

կողմից ներկայացված հայտում մենք առաջնորդվել ենք այն սկզբունքով, որ մեր կողմից առաջարկված դյուրակիր համակարգիչները կարող են համալրված լինել նաև պահանջվածից ավելի հզոր (հետևաբար նաև ավելին, քան համարժեքն է) բնութագրերով: Հանձնաժողովի ուշադրությունն է հրավիրվել այն փաստի վրա, որ համակարգիչների պրոցեսորների արտադրողականությունը և հզորությունը չի որոշվում միայն նրանց հաճախականությամբ, այլ այն էապես կախված է և որոշվում է նաև պրոցեսորի միջուկների (CORE) և հոսքերի (THREAD) քանակներով, ինչպես նաև քեշ (SMART) հիշողության ծավալով:

Հրավերով պահանջվող դյուրակիր համակարգիչների պրոցեսորի համար սահմանված են հետևյալ բնութագրերը՝

պրոցեսոր՝ առնվազն 2.1GHz, արագացնելու հնարավորությամբ՝ մինչև 3.9GHz (հաճախականությունը), առնվազն- 2 Cores (միջուկները), 4 Threads (հոսքերը), 4MB Smart Cache (քեշ հիշողությունը)

Այս պահանջներին լիովին բավարարում են օրինակ Intel Core i3-8145U, կամ Intel Core i3-10110U պրոցեսորները:

Մեր կողմից առաջարկված դյուրակիր համակարգիչները համալրված են ավելի հզոր և ավելի թանկ Intel Core I5-1035G1 պրոցեսորներով, որոնց հաճախականությունը 1GHz է, արագացնելու հնարավորությունը մինչև 3,6GHz է, միջուկների (Cores) քանակը 4 է, հոսքերի (Theards) քանակը 8 է, քեշ (Smart Cache) հիշողությունը 6Mb է, որոնց շնորհիվ առաջարկվող դյուրակիր համակարգիչների պրոցեսորների արտադրողականությունը էապես գերազանցում է պահանջվող բնութագրերին բավարարող Intel Core i3-8145U կամ Intel Core i3-10110U պրոցեսորների արտադրողականությանը:

Մեր կողմից ներկայացված տեղեկանքի իմաստը և նպատակը կայանում էր նրանում, որպեսզի հաշվի առնվի, որ պրոցեսորները համեմատելու համար բավարար չէ համեմատել միայն նրանց հաճախականությունները: Կարևոր է ընդունել, որ չի կարելի համեմատել տարբեր դասի (Celeron, Pentium, i3, i5, i7) պրոցեսերները միմիանց հետ՝ միայն համեմատելով նրանց հաճախականությունները: Համացանցում կարելի է գտնել մեր կողմից առաջարկված Intel Core I5-1035G1 պրոցեսորների և Intel Core i3-8145U կամ Intel Core i3-10110U պրոցեսորների բազմաթիվ մասնագիտական համեմատություններ, որոնք ապացուցում են, որ մեր կողմից առաջարկված պրոցեսորները էապես հզոր են:

Այնուհետև հունիսի 22-ին՝ մինչև հանձնաժողովի նիստի կասեցման ավարտը, մենք էլեկտրոնային նամակով «ՔՈՄՓ.ԷՅԷՄ» ՍՊԸ-ի կնիքով և տնօրենի ստորագրությամբ՝ ի լրումն հունիսի 19-ին ուղարկած տեղեկանքի, ուղարկել ենք գրություն և այլ բնութագրերով և մեր կողմից մատակարարման համար հասանելի դյուրակիր համակարգչի նկարագրություն, որտեղ նշել ենք, որ այս դեպքում դյուրակիր համակարգիչները համալրված կլինեն հաճախականության իմաստով պահանջվող բնութագրերին համապատասխան պրոցեսորով, սակայն դրանց միկրոհիշողություններ կարդացող սարքը արտաքին է: Եվ այս անհամապատասխանության պատճառով է, որ ի սկզբանե մենք առաջակել ենք ավելի հզոր և ավելի թանկ պրոցեսորով դյուրակիր համակարգիչներ: Այս փաստաթղթերը ստանալուց հետո հանձնաժողովի քարտուղարը զանգահարել է ինձ և հորդորել, որ գրությունը և նոր բնութագրերը ես ստորագրեմ էլեկտրոնային, այլապես հանձնաժողովը դրանք չի քննարկի, քանի որ գրագրությունը ըստ հրավերի պահանջի պետք է ներկայացնել էլեկտրոնային ստորագրությամբ փաստաթղթերով: Նոր փաստաթղթերը ստանալուց հետո հանձնաժողովի անունից մեզ առաջարկվել է նորից շտկել անհամապատասխանությունը, մենք պատասխանել ենք, որ մեր կողմից ի սկզբանե առաջարկված դյուրակիր համակարգչի միկրոհիշողություններ կարդացող սարքը ներքին է: Մեր այս պատասխանը հանձնաժողովը պետք է հասկանար, որ մենք նոր առաջարկ չենք ներկայացրել:

Մինչև հանձնաժողովի վերջնական որոշման ստանալը ես փորձել եմ հեռախոսով տեղեկանալ հանձնաժողովի որոշման մասին, սակայն դա ինձ չի ասվել և ես էլեկտրոնային նամակով 22/06/20թ ժամը 16:54 հանձնաժողովին եմ ուղարկել հետևյալ գրությունը՝

«Այսօր մեր կողմից ուղարկված տեխնիկական բնութագրերի և գնային առաջարկի նոր տաբերակները մենք Ձեզ էինք ուղարկել ի լրումն մեր տեղեկանքի և հույս ունեմ, որ հանձնաժողովը նախ քննարկել է մեր տեղեկանքով հիմնավորված այն տեղեկությունը, թե ինչու ենք մենք համարում, որ մեր սկզբնական առաջարկը բավարարում է հրավերի պահանջին: Իսկ այսօրվա նոր տարբերակը հանձնաժողովի կողմից պետք է դիտարկվեր ոչ թե նոր առաջարկ, այլ բացատրություն, թե ինչու մենք ի սկզբանե այսօրվա տարբերակը չենք առաջարկել:

Մինչև էլեկտրոնային ստորագրությամբ հավելվածների ուղարկելը ես ուղարկել էի նաև կից գրություն, որը հույս ունեմ, որ նույնպես ներկայացվել է հանձնաժողովի քննարկմանը»:

Այնուհետև, նույն օրը ժամը 19:58՝ www.gnumner.am կայքում տեղադրված մեր հայտի մերժման վերաբերյալ հանձնաժողովի նիստի արձանագրության հետ ծանոթանալուց հետո, «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-20/34» ծածկագրով գնանշման հարցման Գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ պարոն Արթուր Ստեփանյանին ենք ուղարկել հետևյալի խնդրանքը՝

«Ստացել եմ հանձնաժողովի 22/06/2020թ այսօրվա նիստի արձանագրություն 3-ը: Այսպիսով, այսօր առավոտյան իմ կողմից էլեկտրոնային նամակով ուղարկած լրացուցիչ ինֆորմացիան, թե ինչու մենք չենք առաջարկել i3 պրոցեսորով դյուրակիր համակարգիչներ, այլ առաջարկել ենք ավելի հզոր i5 պրոցեսորով դյուրակիր համակարգիչներ, ընթացակարգի քարտուղարի հորդորով ես ցայտնոտային իրավիճակում սխալմամբ ստորագրեցի նաև էլեկտրոնային, որի արդյունքում այն փաստորեն գնահատող հանձնաժողովին է ներկայացվել որպես առաջարկի շտկում և անտեսվել է շտկման պահանջի վերաբերյալ մեր կողմից 19/06/2020թ ներկայացված անհամաձայնություն-տեղեկանքը:

Սա ես համարում եմ մեր կողմից ներկայացված ինֆորմացիայի սխալ մեկնաբանություն և խնդրում եմ գտնել հնարավորություն մեր կողմից այսօր՝ 22/06/2020թ առավոտյան ներկայացված և շտկում մեկնաբանված էլեկտրոնային ստորագրած հավելված 1.1 և հավելված 2-ը անտեսել և ի սկզբանե մեր հայտով ներկայացված առաջարկի համապատասխանությունը հրավերի պահանջներին գնահատել նորից»:

Մեր այս վերջին գրությանը ի պատասխան մեզ է ուղարկվել ՀՀ դատական դեպարտամենտի ղեկավարի ֆինանսատնտեսական հարցերով տեղակալ պարոն Ա. Ստեփանյանի թիվ ԴԴ-3-4275 առ 25/06/2020թ գրությունը, որտեղ նշվել է, որ մեր հայտի վերաբերյալ վերջնական որոշման կայացման ժամանակ պրոցեսորների հզորությունների համեմատության վերաբերյալ մեր կողմից ներկայացված անհամաձայնություն-տեղեկանքը չի անտեսվել:

Այսպիսով, չնայած այն բանին, որ հանձնաժողովը տեղեկացված է եղել, որ մեր կողմից ի սկզբանե ներկայացրած դյուրակիր համակարգիչների պրոցեսորները ավելի հզոր են, որոշում է կայացրել, որ մեր ի սկզբանե ներկայացրած առաջարկը ենթակա է մերժման:

Վստահ եմ, որ եթե պատվիարտու կազմակերպությունների գնահատող գանձնաժովները ի սկզբանե սահմանված տեխնիկական բնութագրերի նկատմամբ նման մոտեցում ցուցաբերեին (ցուցաբերեն), այսինքն մերժեին պահանջվող բնութագրերը

գերազանցող առաջարկները, ապա գնման ընթացակարգերի մի մասը կարող էին (են) չկայանալ:

Մենք մեր հայտով փորձել ենք օգտակար լինել Պատվիրատուին և Պատվիրատուի գնումների պլանով նախատեսված գումարի սահմաններում՝ մեզ համար շատ փոքր շահույթով, առաջարկել ենք բարձրորակ և հզոր դյուրակիր համակարգիչներ: Հայտը ներկայացնելու պահին մենք մեր տրամադրության տակ չենք ունեցել ավելի թույլ և հրավերով սահմանված բնութագրերին լիովին համապատասխան դյուրակիր համակարգիչներ առաջարկելու հնարավորություն: Առաջարկ տալու ժամանակ եթե մենք մի փոքր անգամ կասկած ունենայինք, որ ավելի հզոր պրոցեսորով դյուրակիր համակարգիչները կարող են մերժվել, ապա, բնականաբար, ընթացակարգին մասնակցության հայտ չէինք ներկայացնի:

Հարգարժան պարոն Ներսիսյան, հաշվի առնելով մեր կողմից վերևում ներկայացրած տեղեկատվությունը քննարկվող հարցի վերաբերյալ, ինչպես նաև այն հանգամանքը, որ «ՔՈՄՓ.ԷՅԷՄ» ՍՊԸ-ի կողմից ընթացակարգին մասնակցությունը որևէ դիտավորություն չի պարունակում, խնդրում եմ «ՔՈՄՓ.ԷՅԷՄ» ՍՊԸ-ի նկատմամբ չկայացնել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու որոշում: Հավաստիացնում եմ, որ «ՔՈՄՓ.ԷՅԷՄ» ՍՊԸ-ի հետագա մասնակցության արգելանքը պետական գնումների ընթացակարգերին կլինի «ՔՈՄՓ.ԷՅԷՄ» ՍՊԸ-ի մի քանի աշխատողների աշխատանքից զրկվելուն համարժեք որոշում: Հավաստիացնում եմ նաև, որ «ՔՈՄՓ.ԷՅԷՄ» ՍՊԸ-ն ունի բավարար ռեսուրսներ, որպեսզի գնումների ընթացակարգերին իր հետագա մասնակցությամբ շարունակի ներկայացնել մրցակցային գնային առաջարկներ, որից կշահի նաև մեր երկրի պետական բյուջեն»:

Ի լրումն վերը նշված գրության՝ Ընկերությունը հայտնել է հետևյալը.

«Ուզում եմ ևս մեկ անգամ Ձեր ուշադրությունը հրավիրել հետևալ, իմ կարծիքով շատ կարևոր հանգամանքների վրա:

Ընթացակարգի հրավերով պահանջվում են դյուրակիր համակարգիչներ, որոնք պետք է ունենան հրավերով սահմանված կամ նրանց համարժեք տեխնիկական բնութագրեր: Մեր հայտով մենք առաջարկել ենք դյուրակիր համակարգիչներ, որոնք բոլոր բնութագրերով համընկնում են պահանջի հետ, իսկ պրոցեսորը իր արտադրողականությամբ ավելի հզոր է, քան պահանջվող տեխնիկական բնութագրերին հավասար բնութագրերով որևէ այլ պրոցեսոր: Գնահատող հանձնաժողովի գնահատմամբ,

քանի որ մեր կողմից առաջարկվող դյուրակիր համակարգչի պրոցեսորի հաճախականությունը ցածր է հրավերով պահանջվող պրոցեսորի հաճախականությունից, այն չի համապատասխանում հրավերի պահանջին: Հանձնաժողովի այս գնահատականին մենք պատասխանել ենք, որ պրոցեսորի արտադրողականությունը չի որոշվում միայն նրա հաճախականությամբ և պրոցեսորի հզորության ամբողջական գնահատականը տալու համար հարկավոր է հաշվի առնել նաև պրոցեսորի ամբողջական հզորությունը որոշող այլ կարևոր բնութագրեր, ինչպիսիք են միջուկների և հոսքերի քանակը, արագագործ քեշ հիշողության ծավալը և այլն: Ահա այս բնութագրերի ավելի բարձր լինելու շնորհիվ է, որ մեր կողմից առաջարկված դյուրակիր համակարգիչների պրոցեսորները ավելի հզոր են, քան հրավերով սահմանված բնութագրերով դյուրակիր համակագիչների պրոցեսորները: Պատահական չէ, որ հրավերով սահմանված բնութագրերով պրոցեսորները դասակարգվում են որպես i3 դասի պրոցեսորներ, իսկ մեր կողմից առաջարկված պրոցեսորները դասակարգվում են որպես i5 դասի պրոցեսորներ: Այստեղ տեղին է նշել, որ Համաշխարհային Բանկի և այլ միջազգային կառույցների կողմից ֆինանսավորվող մրցույթներում համակարգիչների տեխնիկական բնութագրերում երբեք չի նշվում պրոցեսորի, մայրական սալիկի և մյուս բաղադրիչների բնութագրերը նրանց առանձին վերցրած ոչ ծավալային բնութագրերով, այլ պահանջվող համակարգչի նկատմամբ սահմանվում է հզորության ռեյտինգ՝ այս կամ այն համընդհանուր ճանաչում գտած ռեյտինգային համակարգի միջոցով հաշվարկված: Ինտերնետում դժվար չէ գտնել տարբեր ռեյտինգային համակարգերի արդյունքում ստացված գնահատականները մեր կողմից առաջարկված և հրավերով պահանջվող պրոցեսորների հզորությունների վերաբերյալ: Մեզ հանդիպած բոլոր համեմատություններով մեր առաջարկած պրոցեսոր ռեյտինգը էապես բարձր է պահնաջվող բնութագրերով պրոցեսորի ռեյտինգից:

Այն որ գնային առաջարկների գնահատման ժամանակ պահանջվող բնութագրերին համարժեք են գնահատվում նաև պահանջներին ոչ մի բնութագրով չզիջով առաջարկները, կարծում եմ կասկած չպիտի առաջացնի, քանի որ դա նախ ընդունված պրակտիկա է բազմաթիվ հիմնարկությունների գնահատող հանձնաժողովների գործունեության մեջ և, հետո, ո՞րն է այստեղ մասնակցի միտումը կամ մեղքը, եթե նա առաջարկում է գնման առարկային ոչնչով չզիջող ապրանք՝ դրա համար պատվիրատուի բյուջեով նախատեսված գումարի շրջանակներում՝ դրանով հնարավորություն տալով պատվիրատուին ձեռք բերել ավելի հզոր և ավել ժամանակակից ապրանք՝ նախատեսված բյուջեի սահմաններում:

Ուզում եմ իմ անհամաձայնությունը հայտնել նաև մեկ հարցի վերաբերյալ: ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Ձեր քննարկմանն է ներկայացվել «ՔՈՄՓ.ԷՅԷՄ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ՝ ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով:

Ինձ մոտ հարց է առաջանում, թե օրենքի նշված հոդվածի ո՞ր դրույթն է մեր կողմից խախտվել, որ մեր նկատմամբ առաջարկվում է կիրառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ: Կարծում եմ մենք դեռևս մեր հայտի գնահատման փուլում ենք գտնվում: Եթե առկա է կարծիք, որ մենք հրաժարվել ենք ընթացակարգի հետագա մասնակցությունից, ապա պիտի տեղեկացնեմ, որ մեր որևէ բանավոր կամ գրավոր պնդմամբ գնահատող հանձնաժողովին չենք ներկայացրել գնման ընթացակարգի հետագա մասնակցությունից հրաժարվելու մեր որոշման մասին: Ավելին, եթե պատվիրատուի մոտ դեռևս չի վերացել գնման առարկայի ձեռք բերման պահանջը, ապա այս պահին նույնպես պատրաստ ենք կատարել մեր կողմից առաջարկված դյուրակիր համակարգիչների մատակարարումը հրավերով սահմանված ժամկետներում և մեր առաջարկած գներով: Չեմ բացառում, որ դրա արդյունքում մենք չենք ունենա նաև այն չնչին շահույթը, որը նախատեսել էինք ունենալ մեր գնային առաջարկով, կամ գործարքը կկատարենք նույնիսկ վնասով, քանի որ ստեղծված օրեցոր բարդացող համաշխարհային տնտեսական իրվիճակում ավելի ու ավելի դժվար է դառնում որևէ ապրանք պատվիրելը և Հայաստանի հանրապետություն հասցնելը:

Հարգելի պարոն Ներսիսյան: Եվս մեկ անգամ խնդրում եմ չկայացնել «ՔՈՄՓ.ԷՅԷՄ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու որոշում: Մեր գործողություններում չկա այնպիսի արարք, որը որևէ մեկին տնտեսական կամ այլ վնաս է հասցրել, որի պատճառով պետք է կիրառել երկու տարով գնման ընթացկարգերին մասնակցելը արգելելու որոշում»:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/144 ընթացակարգի շրջանակներում 08.07.2020թ. ժամը 11:05-ին և 22.07.2020թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, 22.07.2020թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստին տնօրենը ապահովել է իր մասնակցությունը, ով պնդել է վերոհիշյալ գրություններով ներկայացված դիրքորոշումը:

3. <u>ՀՀ դատական դեպարտամենտի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ դատական դեպարտամենտը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 25.06.2020թ. թիվ ԴԴ-3-Ե-4258 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետով՝ ներկայացվում է ՀՀ դատական դեպարտամենտի կարիքների համար դյուրակիր համակարգիչների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-20/34» ծածկագրով գնանշման հարցման ձևով գնում կատարելու ընթացակարգի շրջանակներում «ՔՈՄՓ.ԷՅԷՄ» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/144 ընթացակարգի շրջանակներում 08.07.2020թ. ժամը 11:05-ին և 22.07.2020թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, 08.07.2020թ. ժամը 11:05-ին ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրել են ինքնաբացարկի միջնորդություն:

4. <u>ՍՑ-ՆԳ-2020/144 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2020/144 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ դատական դեպարտամենտի կողմից կազմակերպվել է «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-20/34» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «ՔՈՄՓ. ԷՅԷՄ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.06.2020թ. նիստի թիվ 2 արձանագրությամբ արձանագրվել է, որ Ընկերության կողմից ներկայացված Հավելված 1.1-ը՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, այն է՝ Ընկերության կողմից առաջարկվել է «Պրոցեսորը՝ Intel Core i5-1035G1, 1.0GHz արագացնելու հնարավորությամբ՝ մինչև

3.6GHz», մինչդեռ՝ հրավերով սահմանված է «Պրոցեսորը առնվազն 2.1GHz արագացնելու հնարավորությամբ՝ մինչև 3.9GHz» և որոշվել է, հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետը, առաջարկել Ընկերությանը մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

3. Արձանագրված անհամապատասխանության վերաբերյալ Պատվիրատուն 18.06.2020թ. ծանուցել է Ընկերությանը՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերոնշյալ անհամապատասխանությունը:

4. Ի պատասխան վերը նշված ծանուցման՝ Ընկերությունը 19.06.2020թ. Պատվիրատուին ուղղված գրությամբ հայտնել է, հետևյալը.

««ԴԴ-ԳՀԱՊՁԲ-20/34» ծածկագրով գնանշման հարցմանը մեր կողմից ներկայացված հայտում մենք առաջնորդվել ենք այն սկզբունքով, որ մեր կողմից առաջարկված դյուրակիր համակարգիչները կարող են համալրված լինել նաև պահանջվածից ավելի հզոր (հետևաբար նաև ավելին, քան համարժեքն է) բնութագրերով:

Խնդրում եմ մեր առաջարկի տեխնիկական բնութագրերը գնահատեիս հաշվի առնեք այն փաստը, որ համակարգիչների պրոցեսորների արտադրողականությունը և հզորությունը չի որոշվում միայն նրանց հաճախականությամբ, այլ այն էապես կախված է և որոշվում է նաև պրոցեսորի միջուկների (CORE) և հոսքերի (THREAD) քանակներով, ինչպես նաև քեշ (SMART) հիշողության ծավալով:

Հրավերով պահանջվող դյուրակիր համակարգիչների պրոցեսորի համար սահմանված են հետևյալ բնութագրերը՝

պրոցեսոր՝ առնվազն 2.1GHz, արագացնելու հնարավորությամբ՝ մինչև 3.9GHz (հաճախականությունը), առնվազն- 2 Cores (միջուկները), 4 Threads (հոսքերը), 4MB Smart Cache (քեշ հիշողությունը):

Այս պահանջներին լիովին բավարարում են օրինակ Intel Core i3-8145U, կամ Intel Core i3-10110U պրոցեսորները:

Մեր կողմից առաջարկված դյուրակիր համակարգիչները համալրված են ավելի հզոր և ավելի թանկ Intel Core I5-1035G1 պրոցեսորներով, որոնց հաճախականությունը 1GHz է, արագացնելու հնարավորությունը մինչև 3,6GHz է, միջուկների (Cores) քանակը 4 է, հոսքերի (Theards) քանակը 8 է, քեշ (Smart Cache) հիշողությունը 6Mb է, որոնց շնորհիվ առաջարկվող դյուրակիր համակարգիչների պրոցեսորների արտադրողականությունը

էապես գերազանցում է պահանջվող բնութագրերին բավարարող Intel Core i3-8145U կամ Intel Core i3-10110U պրոցեսորների արտադրողականությանը»:

Ամփոփելով՝ Ընկերությունը հայտնել է, որ լիահույս է, որ առաջարկի վերջնական գնահատման ժամանակ հաշվի կառնվի Ընկերության կողմից ներկայացված սույն տեղեկանքը:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.06.2020թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրվել է, որ Ընկերությունը ի պատասխան 18.06.2020թ. ծանուցման՝ 19.06.2020թ. էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացրել է էլեկտրոնային նամակ, այնուհետև՝ 22.06.2020թ. ժամը 10:40-ին /անհամապատասխանությունների համար սահմանված ժամկետում/ ներկայացրել է Հավելված 1.1-ի՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի, նոր տարբերակը:

6. Նույն արձանագրությամբ արձանագրվել է, որ հանձնաժողովը ուսումնասիրել է Ընկերության կողմից շտկված Հավելված 1.1-ը և արձանագրել է, որ այն չի համապատասխանում հրավերով սահմանված տեխնիկական բնութագրին, մասնավորապես՝ հրավերով սահմանված է «Ներկառուցված Card reader», այնինչ Ընկերության կողմից առաջարկված տեխնիկական բնութագրում նշված է՝ «USB Card reader», հետևաբար հանձնաժողովը որոշեց Ընկերության հայտը մերժել:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 30.06.2020թ. թիվ 26/26/9761-2020 գրությունը, ՀՀ դատական դեպարտամենտի 25.06.2020թ. թիվ ԴԴ-3-Ե-4258 գրությունը և կից փաստաթղթերը, Ընկերության կողմից 07.07.2020թ. և 22.07.2020թ. գրությունները, ՀՀ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի 30.07.2020թ. գրությունը՝ N 20-0059Պ փորձագետի եզրակացությամբ, գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը

ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***<u>հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:</u>***

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի զ) պարբերության համաձայն՝ ***հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը***, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Նույն կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես

իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանվում է, որ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: ***<u>Ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին</u>***:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ ***եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է***, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «դ» պարբերությամբ սահմանված ժամկետում չի

ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ ՍՑ-ՆԳ-2020/144 ընթացակարգի շրջանակներում 08.07.2020թ. թիվ Ե-4516 գրությամբ ՀՀ դատական դեպարտամենտի ներկայացուցիչները Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրել են ինքնաբացարկի միջնորդություն՝ այն հիմնավորմամբ, որ ԴԴ-ԳՀԱՊՁԲ-20/34 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգում որպես համակարգող և հանձնաժողովի քարտուղար հանդես է եկել՝ Մարիամ Հայրապետյանը, ով հանդսանում է Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանի կինը:

Ինքնաբացարկի միջնորդության վերաբերյալ դիրքորոշում ստանալու նպատակով Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը 08.07.2020թ. թիվ ԲՔԱ-ԳՆ/1/10228-2020 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

««Գնումների մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը չի կարող քննել բողոքը, եթե պարզվում է, որ բողոքարկման գործընթացում ներգրավված է իր հիմնադրած կամ բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպություն, կամ տվյալ բողոքարկման ընթացակարգում ներգրավված է իրեն մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձ (ծնող, ամուսին, երեխա, եղբայր, քույր, ինչպես նաև ամուսնու ծնող, երեխա, եղբայր կամ քույր) կամ այդ անձի հիմնադրած կամ բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպություն: Եթե առկա է սույն մասով նախատեսված պայմանը, ապա տվյալ բողոքի քննման և որոշման կայացման առնչությամբ սույն մասով սահմանված շահերի բախում ունեցող գնումների հետ կապված բողոքներ քննող անձն ինքնաբացարկ է հայտնում տվյալ բողոքի քննումից: Յուրաքանչյուր բողոքի քննման ժամանակ գնումների հետ կապված բողոքներ քննող անձն ստորագրում է շահերի բախման բացակայության մասին հայտարարություն, որը բողոքի վերաբերյալ կայացված որոշման հետ մեկտեղ հրապարակվում է տեղեկագրում:

Օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Պատվիրատուի ղեկավարը սահմանում է ***գնումների համակարգող, որը՝***

1) պատասխանատու է պատվիրատուի՝ գնումների գործընթացի կազմակերպման և համակարգման համար.

2) եզրակացություն է տալիս գնումների շրջանակներում պատվիրատուի հաստատած փաստաթղթերի վերաբերյալ.

3) իրականացնում է գնահատող հանձնաժողովի քարտուղարի լիազորությունները.

4) կազմում և պատվիրատուի ղեկավարի հաստատմանն է ներկայացնում տվյալ գնման ընթացակարգի արձանագրությունը և պայմանագիրը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 5-րդ կետի համաձայն՝ ***յուրաքանչյուր գնման գործընթացի համար պատասխանատու են պատվիրատուի ղեկավարը, ինչպես նաև իրենց վերապահված իրավասությունների մասով՝***

1) գնումները համակարգողը.

2) պատասխանատու ստորաբաժանումը.

3) գնահատող հանձնաժողովը:

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 06.12.2018թ. N 600-Ն հրամանով հաստատված Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության կարգով (հետայսու նաև՝ Կարգ) հաստատված հավելվածի 10-րդ կետի համաձայն՝ ***Օրենքի 49-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքի ի հայտ գալու օրը, Անձը այդ մասին գրավոր տեղեկացնում է քարտուղարությանը կամ առաջին բաժնին, որը նույն օրը սույն կարգի 3-րդ կետով սահմանված կարգով այն տրամադրում է այլ Անձի՝ այդ մասին տեղեկացնելով նաև վարչություններին:***

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ դատական դեպարտամենտի 25.06.2020թ. թիվ ԴԴ-3-Ե-4258 գրության հիման վրա, 30.06.2020թ. թիվ 26/26-1/9761-2019 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «ՔՈՄՓ. ԷՅԷՄ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ ՀՀ դատական դեպարտամենտի կողմից կազմակերպված «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-20/34» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգում որպես գնումների համակարգող հանդես է եկել կինս՝ Մարիամ Հայրապետյանը: «ՔՈՄՓ. ԷՅԷՄ» ՍՊԸ-ն հանդիսացել է «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-20/34» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի մասնակից:

Վերոգրյալով պայմանավորված և հաշվի առնելով վերը նշված իրավակարգավորումները՝ խնդրում եմ հայտնել Ձեր դիրքորոշումը հետևյալի վերաբերյալ.

• արդյոք Օրենքի 49-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջը կիրառելի է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգի շրջանակներում:

• Եթե Օրենքի 49-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջը կիրառելի է, ապա վերոնշված փաստն արդյոք կարող է հիմք հանդիսանալ իմ կողմից ինքնաբացարկ հայտնելուն»:

Ի պատասխան վերը նշված գրության՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը 17.07.2020թ. թիվ Ն/26-1/15299-2020 գրությամբ հայտնել է հետևյալը.

«1. Գրությամբ բարձրացված առաջին հարցի կապակցությամբ՝ արդյոք «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 49-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջը կիրառելի է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգի շրջանակներում, հատնում ենք, որ.

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով սահմանվում է, որ մասնակիցը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

ՀՀ ֆինանսների նախարարի 2018 թվականի դեկտեմբերի 6-ի N 600-Ն հրամանով հաստատված Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության կարգով հաստատված հավելվածի 4-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված ընթացակարգը նախաձեռնում է նախարարությունը՝ գնումների քաղաքականության վարչության միջոցով, համապատասխան փաստաթղթերը գնումների հետ կապված բողոքներ քննող անձանց գրավոր տրամադրելու եղանակով:

Այսինքն՝ վերը նշված դրույթների համակարգային վերլուծությունից պարզ է դառնում՝ ***<u>գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում</u>***

ընդգրկելու ընթացակարգում որպես կողմեր ներգրավված են մի կողմից լիազոր մարմինը, մյուս կողմից՝ համապատասխան սուբյեկտը (իրավաբանական կամ ֆիզիկական անձը), որի՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու հարցը որոշվում է ընթացակարգի արդյունքներով:

Օրենքի 49-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը չի կարող քննել բողոքը, եթե պարզվում է, որ բողոքարկման գործընթացում ներգրավված է իր հիմնադրած կամ բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպություն, կամ տվյալ բողոքարկման ընթացակարգում ներգրավված է իրեն մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձ (ծնող, ամուսին, երեխա, եղբայր, քույր, ինչպես նաև ամուսնու ծնող, երեխա, եղբայր կամ քույր) կամ այդ անձի հիմնադրած կամ բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպություն: Եթե առկա է սույն մասով նախատեսված պայմանը, ապա տվյալ բողոքի քննման և որոշման կայացման առնչությամբ սույն մասով սահմանված շահերի բախում ունեցող գնումների հետ կապված բողոքներ քննող անձն ինքնաբացարկ է հայտնում տվյալ բողոքի քննումից:

Փաստորեն, ստացվում է, որ բողոք քննող անձը չի կարող քննել բողոքը, եթե բողոքարկման գործընթացում՝ տվյալ դեպքում՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու ընթացակարգում, ներգրավված սուբյեկը լինի Օրենքի 49-րդ հոդվածով նախատեսված հիմքերից մեկով բողոք քննող անձի հետ շահերի բախում ունեցող անձ:

Այլ կեպ ասած՝ Օրենքի 49-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջը կիրառելի է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգի վրա, իսկ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը պարտավոր է ինքնաբացարկ հայտնել, եթե այդ ընթացակարգում ներգրավված անձը (այն ֆիզիկական կամ իրավաբանական անձը, որի՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու հարցը որոշվում է ընթացակարգի արդյունքներով) բողոք քննող անձի հիմնադրած կամ բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունն է, կամ հանդիսանում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հետ մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձ (ծնող, ամուսին, երեխա, եղբայր, քույր, ինչպես նաև ամուսնու ծնող, երեխա,

եղբայր կամ քույր) կամ այդ անձի հիմնադրած կամ բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպություն:

Միաժամանակ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ ի լրումն Օրենքի 49-րդ հոդվածի սահմանափակումների՝ բողոք քննող անձը գործում է նաև «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված սահմանափակումների դաշտում, ինչը, ի թիվս այլնի, ներառում է նաև շահերի բախման իրավիճակում որոշումներ կայացնելու վերաբերյալ կարգավորումները:

Այսպես, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածով սահմանվում է, որ շահերի բախումն իրավիճակ է, երբ պաշտոն զբաղեցնող անձն իր լիազորություններն իրականացնելիս կատարում է գործողություն կամ ընդունում որոշում, որը ողջամտորեն կարող է մեկնաբանվել որպես իր կամ իր հետ փոխկապակցված անձի անձնական շահերով առաջնորդվել: Շահերի բախում առկա չէ, եթե անձնական շահը պաշտոն զբաղեցնող անձի լիազորությունների պատշաճ իրականացման վրա ունի թվացյալ ազդեցություն, որը փաստացի բացակայում է: Միաժամանակ, ուշադրություն ենք հրավիրում նաև նույն հոդվածի 5-րդ մասով սահմանված կարգավորմանը, որի համաձայն՝ պաշտոն զբաղեցնող անձը պետք է խուսափի շահերի բախման հանգեցնող գործողություններից, ձեռնպահ մնա շահերի բախման իրավիճակում գործողություն կատարելուց կամ որոշում ընդունելուց: Եթե պաշտոն զբաղեցնող անձի կողմից կամ նրա մասնակցությամբ իր լիազորությունների շրջանակում գործողության կատարումը կամ որոշման ընդունումը կարող է հանգեցնել շահերի բախման, ապա պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է իր վերադաս անձին կամ անմիջական ղեկավարին (եթե վերադաս կամ անմիջական ղեկավար ունի) ներկայացնել գրավոր հայտարարություն շահերի բախմանը վերաբերող հանգամանքների մասին, որը ենթակա է քննարկման անհապաղ:

2. Ինչ վերաբերում է գրությամբ ներկայացված երկրորդ հարցին, այն է՝ արդյոք նկարագրված իրավիճակը կարող է հիմք հանդիսանալ բողոք քննող անձի կողմից ինքնաբացարկ հայտնելու համար, ապա հարկ է նկատի ունենալ, որ յուրաքանչյուր կոնկրետ դեպքում ինքնաբացարկ հայտնելու հիմքերի առկայության փաստը գնահատում է Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը»:

Այսպիսով՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը, Օրենքի 49-րդ հոդվածի 2-րդ մասը, ՀՀ ֆինանսների նախարարի 2018 թվականի դեկտեմբերի 6-ի N

600-Ն հրամանով հաստատված Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության կարգի 4-րդ կետը, ինչպես նաև ՀՀ ֆինանսների նախարարության 17.07.2020թ. թիվ Ն/26-1/15099-2020 գրությունը, արձանագրել է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու ընթացակարգում որպես անմիջական կողմեր ներգրավված են մի կողմից լիազորված մարմինը՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը, մյուս կողմից այն համապատասխան սուբյեկտը, որի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու հարցը որոշվում է ընթացակարգի արդյունքներով, տվյալ դեպքում «ՔՈՄՓ. ԷՅԷՄ» ՍՊԸ-ն:

Ուստի հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանի կինը տվյալ դեպքում բողոքարկման ընթացակարգի մասնակից չէ, քանի որ վերջինս հանդիսանում է «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-20/34» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնումների համակարգող, իսկ բողոքներ քննող անձին դիմել են «ՔՈՄՓ. ԷՅԷՄ» ՍՊԸ-ին (որպես գնման գործընթացի մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ նախաձեռնելու համար, հետևաբար Օրենքի 49-րդ հոդվածի 2-րդ մասը հիմք չի հանդիսացել ինքնաբացարկ հայտնելու համար:

Անդրադառնալով ՍՑ-ՆԳ-2020/144 ընթացակարգով ներկայացված հիմքերին՝ արձանագրում եմ հետևյալը.

ՀՀ դատական դեպարտամենտի կողմից կազմակերպվել է «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-20/34» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «ՔՈՄՓ. ԷՅԷՄ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.06.2020թ. նիստի թիվ 2 արձանագրությամբ արձանագրվել է, որ Ընկերության կողմից ներկայացված Հավելված 1.1-ը՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, այն է՝ Ընկերության կողմից առաջարկվել է «Պրոցեսորը՝ Intel Core i5-1035G1, 1.0GHz արագացնելու հնարավորությամբ՝ մինչև 3.6GHz», մինչդեռ՝ հրավերով սահմանված է «Պրոցեսորը առնվազն 2.1GHz արագացնելու հնարավորությամբ՝ մինչև 3.9GHz» և որոշվել է, հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետը, առաջարկել Ընկերությանը մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Արձանագրված անհամապատասխանության վերաբերյալ Պատվիրատուն 18.06.2020թ. ծանուցել է Ընկերությանը՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերոնշյալ անհամապատասխանությունը:

Ի պատասխան վերը նշված ծանուցման՝ Ընկերությունը 19.06.2020թ. Պատվիրատուին ուղղված գրությամբ հայտնել է, հետևյալը.

««ԴԴ-ԳՀԱՊՁԲ-20/34» ծածկագրով գնանշման հարցմանը մեր կողմից ներկայացված հայտում մենք առաջնորդվել ենք այն սկզբունքով, որ մեր կողմից առաջարկված դյուրակիր համակարգիչները կարող են համալրված լինել նաև պահանջվածից ավելի հզոր (հետևաբար նաև ավելին, քան համարժեքն է) բնութագրերով:

Խնդրում եմ մեր առաջարկի տեխնիկական բնութագրերը գնահատելիս հաշվի առնեք այն փաստը, որ համակարգիչների պրոցեսորների արտադրողականությունը և հզորությունը չի որոշվում միայն նրանց հաճախականությամբ, այլ այն էապես կախված է և որոշվում է նաև պրոցեսորի միջուկների (CORE) և հոսքերի (THREAD) քանակներով, ինչպես նաև քեշ (SMART) հիշողության ծավալով:

Հրավերով պահանջվող դյուրակիր համակարգիչների պրոցեսորի համար սահմանված են հետևյալ բնութագրերը՝

պրոցեսոր՝ առնվազն 2.1GHz, արագացնելու հնարավորությամբ՝ մինչև 3.9GHz (հաճախականությունը), առնվազն- 2 Cores (միջուկները), 4 Threads (հոսքերը), 4MB Smart Cache (քեշ հիշողությունը):

Այս պահանջներին լիովին բավարարում են օրինակ Intel Core i3-8145U, կամ Intel Core i3-10110U պրոցեսորները:

Մեր կողմից առաջարկված դյուրակիր համակարգիչները համալրված են ավելի հզոր և ավելի թանկ Intel Core I5-1035G1 պրոցեսորներով, որոնց հաճախականությունը 1GHz է, արագացնելու հնարավորությունը մինչև 3,6GHz է, միջուկների (Cores) քանակը 4 է, հոսքերի (Theards) քանակը 8 է, քեշ (Smart Cache) հիշողությունը 6Mb է, որոնց շնորհիվ առաջարկվող դյուրակիր համակարգիչների պրոցեսորների արտադրողականությունը էապես գերազանցում է պահանջվող բնութագրերին բավարարող Intel Core i3-8145U կամ Intel Core i3-10110U պրոցեսորների արտադրողականությանը»:

Ամփոփելով՝ Ընկերությունը հայտնել է, որ լիահույս է, որ առաջարկի վերջնական գնահատման ժամանակ հաշվի կառնվի Ընկերության կողմից ներկայացված սույն տեղեկանքը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.06.2020թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրվել է, որ Ընկերությունը ի պատասխան 18.06.2020թ. ծանուցման՝ 19.06.2020թ. էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացրել է էլեկտրոնային նամակ, այնուհետև՝ 22.06.2020թ. ժամը 10:40-ին /անհամապատասխանությունների համար սահմանված ժամկետում/ ներկայացրել է Հավելված 1.1-ի՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի, նոր տարբերակը:

Նույն արձանագրությամբ արձանագրվել է, որ հանձնաժողովը ուսումնասիրել է Ընկերության կողմից շտկված Հավելված 1.1-ը և արձանագրել է, որ այն չի համապատասխանում հրավերով սահմանված տեխնիկական բնութագրին, մասնավորապես՝ հրավերով սահմանված է «Ներկառուցված Card reader», այնինչ Ընկերության կողմից առաջարկված տեխնիկական բնութագրում նշված է՝ «USB Card reader», հետևաբար հանձնաժողովը որոշեց Ընկերության հայտը մերժել:

Ամփոփելով վերոգրյալը՝ արձանագրում եմ, որ Ընկերությունը ՍՑ-ՆԳ-2020/144 ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ներկայացված դիրքորոշումներով, ինչպես նաև 22.07.2020թ. հրավիրված նիստի ժամանակ պնդել է, որ Ընկերության կողմից հայտով ներկայացված Հավելված 1.1-ը՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, բխում է Պատվիրատուի կարիքից և համարժեք է այն կարիքին, որի բավարարման նպատակով կազմակերպվել է նշված գնումը, հետևաբար անհամապատասխանության արձանագրումը ոչ իրավաչափ է:

Այսպիսով՝ հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարի 06.12.2018թ. N 600-Ն հրամանով հաստատված գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության կարգի 17-րդ կետը, որի համաձայն՝ ***<u>բողոքի քննության ժամանակ ծագող հատուկ գիտելիքներ պահանջող հարցերի պարզաբանման նպատակով Անձը կարող է նշանակել փորձաքննություն</u>***, ինչպես նաև գործի բազմակողմանի, օբյեկտիվ քննության անհրաժեշտությամբ պայմանավորված՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը 22.07.2020թ. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից փորձաքննություն նշանակելու վերաբերյալ միջանկյալ որոշում կայացնելու միջոցով որոշել է ՍՑ-ՆԳ-2020/144 ընթացակարգի շրջանակներում նշանակել փորձաքննություն և փորձաքննության իրականացումը հանձնարարել ՀՀ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի փորձագետներին:

22.07.2020թ. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից փորձաքննություն նշանակելու վերաբերյալ միջանկյալ որոշման համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը 22.07.2020թ. թիվ ԲՔԱ-ԳՆ/1/10973-2020 գրությամբ դիմել է ՀՀ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ին՝ ներկայացնելով ՍՑ-ՆԳ-2020/144 ընթացակարգով փորձաքննություն նշանակելու մասին միջանկյալ որոշումը, ինչպես նաև Ընկերության կողմից ներկայացված Հավելված 1.1-ը՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը և ՀՀ դատական դեպարտամենտի կարիքների համար դյուրակիր համակարգիչների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-20/34» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 1-ին չափաբաժնով սահմանված տեխնիկական բնութագիրը:

Խնդրի պարզաբանման համար փորձագետներին առաջադրվել են հետևյալ հարցերը.

Ուսումնասիրել կից ներկայացվող Ընկերության կողմից հայտի Հավելված 1.1-ով՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով, ներկայացված ապրանքի տեխնիկական բնութագիրը և ՀՀ դատական դեպարտամենտի կարիքների համար «Դյուրակիր համակարգիչների» ձեռքբերման նպատակով հայտարարված «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-20/34» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 1-ին չափաբաժնով սահմանված տեխնիկական բնութագիրը և տալ եզրակացություն՝ արդյոք Ընկերության կողմից ներկայացված ապրանքի տեխնիկական բնութագիրը համապատասխանում է Պատվիրատուի կողմից «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-20/34» ծածկագրով ընթացակարգի հրավերով «Դյուրակիր համակարգիչների» ձեռքբերման համար սահմանված տեխնիկական բնութագրին, այսինքն՝ արդյոք Պատվիրատուի անհրաժեշտ կարիքին համապատասխան ապրանք է ներկայացրել Ընկերությունը հայտի թիվ 1.1 Հավելվածով՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով, թե ոչ:

«Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ը 30.07.2020թ. գրությամբ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին է ներկայացրել 30.07.2020թ. թիվ 20-0059Պ փորձագիտական եզրակացությունը, համաձայն որի.

«Հետազոտությունն ընթացել է հետևյալ կարգով.

«Microsoft Office Word 2007» տեքստային խմբագրիչի միջոցով հետազոտվեց փորձաքննությանը տրամադրված «hraveri-tex-bnutagir» անվանմամբ ֆայլում պարունակվող տեղեկատվությունը: Պարզվեց, որ ֆայլում պարունակվում է «Հավելված N 1 «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-20/34» ծածկագրով պայմանագրի» գլխագրով «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերնագրով աղյուսակ, որում պարունակվում է «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-20/34» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 1-ին չափաբաժնով («Դյուրակիր համակարգիչներ») սահմանված տեխնիկական բնութագիրը, որը բերվում է ստորև՝ Աղյուսակ.1.-ում:

Աղյուսակ.1.

Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	Անվանումը	Տեխնիկական բնութագիրը
1	Դյուրակիր համակարգիչներ	▪ առնվազն 15.6", ▪ կետայնությունը՝ առնվազն 1920x1080, ▪ պրոցեսոր՝ առնվազն 2.1GHz, արագացնելու հնարավորությամբ՝ մինչև 3.9GHz, առնվազն- 2 Cores, 4 Threads, 4MB Smart Cache, ▪ օպերատիվ հիշողություն՝ առնվազն DDR4 8GB SDRAM, ▪ հիշողություն՝ առնվազն SSD 128GB (M.2), ▪ ներկառուցված Card reader, ▪ WiFi, ▪ ներկառուցված LAN, ▪ Bluetooth, ▪ առնվազն - 2xUSB 2.0, 1xUSB 3.0 Type A, 1xUSB 3.1 (Type-C) Gen 1, ▪ ներկառուցված HDMI, ▪ DVD-RW (արտաքին), ▪ Web տեսախցիկ, ▪ ներկառուցված խոսափող, ▪ 1x աուդիո բնիկ, ▪ ENERGY STAR, ▪ Windows 10 Professional 64bit (ակտիվացված, անժամկետ), ▪ պայուսակ (15.6"), ▪ երաշխիքը՝ 3 տարի

Այնուհետև «Adobe Acrobat» ծրագրային ապահովման միջոցով հետազոտվեց փորձաքննությանը տրամադրված «Havelvac-1.1» անվանմամբ ֆայլում պարունակվող տեղեկատվությունը: Պարզվեց, որ ֆայլում պարունակվում է «Հավելված1.1 «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-20/34» ծածկագրով գնանշման հարցման հրավերի» գլխագրով «ՆԿԱՐԱԳԻՐ առաջարկվող ապրանքի ամբողջական» վերնագրով աղյուսակ, որում պարունակվում է «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-20/34» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 1-ին չափաբաժնի («Դյուրակիր համակարգիչներ») համար առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը, որը բերվում է ստորև՝ Աղյուսակ.2.-ում:

Աղյուսակ.2.

Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	Անվանումը	Տեխնիկական բնութագիրը

1	Դյուրակիր համակարգիչներ	▪ Էկրանը՝ 15.6", IPS, ▪ Կետայնությունը՝ FHD, 1920x1080, ▪ Պրոցեսորը՝ Intel Core i5-1035G1, 1.0GHz, արագացնելու հնարավորությամբ՝ մինչև 3.6GHz, 4 Cores, 8 Threads, 6MB Smart Cache; ▪ Օպերատիվ հիշողություն՝ DDR4 8GB SDRAM 2666MHz; ▪ Հիշողություն՝ առնվազն SSD 256GB (M.2 2242 NVM), ▪ Ներկառուցված Card reader (4-in-1 media reader (MMC, SD, SDHC, SDXC)), ▪ WiFi 802.11ax, ▪ Ներկառուցված LAN, Gigabit Ethernet; ▪ Bluetooth 5.0, ▪ Պորտեր՝ առնվազն - 2xUSB 3.1 Gen 1, 1xUSB-C 3.1 Gen 1, 1xUSB-C 3.1 Gen 2, ▪ Ներկառուցված HDMI 1.4, ▪ DVD-RW (արտաքին), Lite-On ES-1 ▪ Web տեսախցիկ, HD720p; ▪ ներկառուցված խոսափող, Dual array digital; ▪ 1x աուդիո բնիկ, headphone/microphone combo jack; ▪ ENERGY STAR, ▪ Windows 10 Professional 64bit (ակտիվացված, անժամկետ), ▪ պայուսակ (15.6"), 15.6" PC Pet 600D, սև, նեյլոնե, (PCP-A1115BK) ▪ երաշխիքը՝ 3 տարի

Այնուհետև համեմատվեցին Աղյուսակ.1.-ում և Աղյուսակ.2.-ում առկա տեխնիկական բնութագրերը: Արդյունքում պարզվեց, որ տեխնիկական բնութագրերի միջև առկա է անհամապատասխանություն: Մասնավորապես՝ «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-20/34» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 1-ին չափաբաժնով («Դյուրակիր համակարգիչներ») սահմանված տեխնիկական բնութագրով դյուրակիր համակարգչի կենտրոնական մշակիչ հանգույցի (CPU) համար նախատեսված է «առնվազն 2.1GHz, արագացնելու հնարավորությամբ՝ մինչև 3.9GHz, առնվազն - 2 Cores, 4 Threads, 4MB Smart Cache», իսկ առաջարկվող ապրանքի նկարագրում նշված է «Intel Core i5-1035G1, 1.0GHz, արագացնելու հնարավորությամբ՝ մինչև 3.6GHz, 4 Cores, 8 Threads, 6MB Smart Cache»: Այսինքն առաջարկվող դյուրակիր համակարգչի կենտրոնական մշակիչ հանգույցի բազային և առավելագույն տակտիկական հաճախականությունները ցածր են մրցույթի հրավերով սահմանված դյուրակիր համակարգչի կենտրոնական մշակիչ հանգույցի բազային և առավելագույն տակտիկական հաճախականություններից:

Հարկ է նշել, որ որոշ դեպքերում՝ առաջարկվող դյուրակիր համակարգչի կենտրոնական մշակիչ հանգույցի ճարտարապետությամբ պայմանավորված, վերջինս կարող է կատարել մրցույթի հրավերով սահմանված դյուրակիր համակարգչի կենտրոնական մշակիչ հանգույցի աշխատանքը և չեզոքացնել բազային և առավելագույն տակտիկական հաճախականությունների միջև առկա անհամապատասխանությունը: Սակայն վերոնշյալ հանգամանքը չի նշանակում, որ առաջարկվող դյուրակիր համակարգչի կենտրոնական մշակիչ հանգույցը համարժեք է մրցույթի հրավերով սահմանված դյուրակիր համակարգչի կենտրոնական մշակիչ հանգույցին:

Ընդհանրացնելով հետազոտության արդյունքները՝ փորձագետը հանգում է հետևյալ հետևությանը.

Հիմք ընդունելով ՀՀ դատական դեպարտամենտի կարիքների համար «Դյուրակիր համակարգիչների» ձեռքբերման նպատակով հայտարարված «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-20/34» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 1-ին չափաբաժնով սահմանված տեխնիկական բնութագիրը և «ՔՈՄՓ.ԷՅԷՄ» ՍՊ ընկերության կողմից հայտի Հավելված 1.1-ով՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով ներկայացված ապրանքի տեխնիկական բնութագիրը, համադրելով վերջիններս միմյանց հետ պարզվել է, որ «ՔՈՄՓ.ԷՅԷՄ» ՍՊ ընկերության կողմից առաջարկված դյուրակիր համակարգչի տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում պատվիրատուի կողմից «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-20/34» ծածկագրով ընթացակարգի հրավերով «Դյուրակիր համակարգիչների» ձեռքբերման համար սահմանված տեխնիկական բնութագրին: Մասնավորապես «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-20/34» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 1-ին չափաբաժնով սահմանված և «ՔՈՄՓ.ԷՅԷՄ» ՍՊ ընկերության կողմից առաջարկված դյուրակիր համակարգիչների կենտրոնական մշակիչ հանգույցների միջև առկա է անհամապատասխանություն (մանրամասն՝ տես սույն եզրակացության «Հետազոտական մաս»-ում)»:

Ընդ որում՝ Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***<u>հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:</u>***

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Սույն գործի փաստական հանգամանքների համադրված վերլուծության, ինչպես նաև հիմք ընդունելով «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի 30.07.2020թ. թիվ 20-0059Պ փորձագիտական եզրակացությունը՝ Ընկերության կողմից առաջարկված և Ընթացակարգի հրավերով սահմանված տեխնիկական բնութագրերի վերաբերյալ, այն է՝ «ՔՈՄՓ.ԷՅԷՄ» ՍՊ ընկերության կողմից առաջարկված դյուրակիր համակարգչի տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում պատվիրատուի կողմից «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-20/34» ծածկագրով ընթացակարգի հրավերով «Դյուրակիր համակարգիչների» ձեռքբերման համար սահմանված տեխնիկական բնութագրին, գտնում եմ, որ Ընկերության կողմից ինչպես հայտի Հավելված 1.1-ով, այնպես էլ շտկված Հավելված 1.1-ով առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրերը չեն համապատասխանում Ընթացակարգի հրավերով գնման առարկա հանդիսացող դյուրակիր համակարգիչների համար սահմանված տեխնիկական բնութագրին, ուստիև նման պայմաններում արձանագրում եմ, որ «ՔՈՄՓ. ԷՅԷՄ» ՍՊԸ-ն ԴԴ-ԳՀԱՊՁԲ-20/34 ծածկագրով ընթացակարգի շրջանակներում թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի խախտում, հետևաբար առկա են Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ինչ վերաբերում է Ընկերության հետևյալ դիտարկմանը. «թե օրենքի նշված հոդվածի ո՞ր դրույթն է մեր կողմից խախտվել, որ մեր նկատմամբ առաջարկվում է կիրառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ: Կարծում եմ մենք դեռևս մեր հայտի գնահատման փուլում ենք գտնվում: Եթե առկա է կարծիք, որ մենք հրաժարվել ենք ընթացակարգի հետագա մասնակցությունից, ապա պիտի տեղեկացնեմ, որ մեր որևէ բանավոր կամ գրավոր պնդմամբ գնահատող հանձնաժողովին չենք ներկայացրել գնման ընթացակարգի հետագա մասնակցությունից հրաժարվելու մեր որոշման մասին: Ավելին, եթե պատվիրատուի մոտ դեռևս չի վերացել գնման առարկայի ձեռք բերման պահանջը, ապա այս պահին նույնպես պատրաստ ենք կատարել մեր կողմից առաջարկված դյուրակիր համակարգիչների մատակարարումը հրավերով սահմանված ժամկետներում և մեր առաջարկած գներով», ապա սույն մասով հայտնում եմ հետևյալը.

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով սահմանվում է, որ մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, ***եթե խախտել է*** պայմանագրով

նախատեսված կամ ***գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է*** պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ ***գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:***

Կարգի 41-րդ կետով սահմանվում է, որ ***եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:***

Ընդ որում՝ Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: ***Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:***

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.06.2020թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընկերության հայտը Կարգի 42-րդ կետի համաձայն մերժվել է, որով դադարեցվել է Ընկերության հետագա մասնակցությունը ԴԴ-ԳՀԱՊՁԲ-20/34 ծածկագրով գնման ընթացակարգին, այն հիմքով, որ Ընկերության կողմից ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, չի համապատասխանել Ընթացակարգի հրավերով դյուրակիր համակարգիչների համար սահմանված տեխնիկական բնութագրին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 30.06.2020թ. թիվ 26/26/9761-2020 գրությամբ «ՔՈՄՓ. ԷՅԷՄ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «ՔՈՄՓ. ԷՅԷՄ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ

գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**